27. ԾՈՒՌ ՏՂԻ ԽԵՔԱԹ

Կէղի, չէղի պառավ մի կէղի, պառվուն տղէ մի կէղի։ Պառվու տղեն շատ խորոտ կէղի։ Հասակին օր կխասի, կծռի։

Էտոց տուռ ճոչ քարմ կէղի, տղեն սաբախտան օր գելի, պտի էրթա էն քարի վրեն նստի, քար էնէ ուրին ծի։ Էնքան օտներով ղարկէ քարին, չոքերուց մինչև կրունկ կաշի չմացէ վրեն։

Էգ էրկրի թագավոր ու լալեն գելին էրկրի մեշ թեվտիր կըլրխ (տարազափոխ) ման կուգան։

Կուգան էտ պառվու գեղ, պառվու տուռ թագավոր կտեսի օր մեկ խորոտ տղէ մի, ծռեր ա, ելէ քար խեծէ, օտներ էնքան քարին ղարկէ, չոքերուց մինչև կրունկ կաշի վրեն չմացէ։

Թագավորին շատ ցավ կիտա։ Թագավոր կդառնա ուր տուն կէրթա։ Թագավորի ախչիկ կտեսի օր ուր խոր նիաթ տեխ չէ (տրամադրություն վատ է), կխարցու ուր խորից.

— Թագա՛վոր, էսօր քու նիաթ ընչի՞ տեխ չէ։

Թագավոր կըսա.— Էսօր ես ու լալեն գացինք թեպտիր կըլրխի զվռնեցինք, գեղըմ դացինք, մե խորոտ տղեմ տեսա օր խելքը թռուցեր էր, ծուռ էր էղե։ Էլեր էր քարի վրեն խեծեր էր, էնքան օտներ քարին էր ղարկէ, չոքերուց մինչև կրունկ կաշի չմացէ վրեն,— ըսաց,— էտ ապով ես կմտածեմ։

Ախչիկ պտի ըսեր, թե՝ «Լավ ախչկան մի ծեռ ընգեր էնի, լավ մարթմ կէղեր»։ Ախչիկ էդ խոսք ասելու փոխարեն, ըսաց.

— Եթե իմ ծեռ ընգեր էգ տղեն, լավ մարթմ կէղեր։

Թագավոր էդ խոսք լսելով հերսոտավ, կանչեց էրկու մարթու, ըսաց.

— Էս ախչիկ կտանիք, պառվու ծուռ տղին կիտաք։

Տվեց էդ էրկու մարթուն ուր ախչիկ։ Էդ էրկու մարթ ախչիկ տարան, պառվուն թասլիմ էնեցին, ըսին.

— Թագավոր ուր ախչիկ ճամփեց քու տղին։

Պառավն ըսաց.— Իմ տղեն ծուռ ա, ես իմ տղեն չկենամ շախեմ, ես թագավորի ախչի՞կ ինչպես կենամ շախեմ։

Մարթիկ թորկին գացին։ Թագավորի ախչիկ տեսավ էդ տղեն ծուռ չէ, տղեն սիրահարված ա։

Ախչիկն էն լուսուն պառվուն ըսաց.— Գնա՛, էրկու մշակ բե ընձի։

Պառավ գնաց, էրկու մշկուն կղանչեց. մշկըներուն տուն բերեց։ Թագավորի ախչիկ մշկըներուն ըսաց.

— Դուք օրական ի՞նչ կառիք։

Ըսաց.— Օրական կառինք տաս ղուրուշ։

Ըսաց.— Ես ձրդի կիտամ քսանական ղուրուշ, էսօր դացեք ամեկդ խուրցմ վարոց (ճիպոտ) ընծի բերեք։

Մշկըներ ուրախցան, սար գացին, ամեն մեկ, մեկ խուրց վարոց բերեցին, թագավորի ախչկան տվեցին։

Թագավորի ախչիկն ըսաց.— Ձրդի մեկ մեկ մեճիդ էլ կիտամ, դացեք ամեկդ իրեք կողով ձիու փայեն բերեք։

Մշկըներ ուրախցան, վերցին մեկ մեկ կողով, գացին կավուշի[1] (զորանոց) դռնեն ամեկ իրեք կողով փայեն բերին։ Առան ուրանց փարեն, մշկըներ թորկին գացին։

Պառվուն ըսաց թագավորի ախչիկ.— Քու տղեն կղանչա տուն թ'ի գա։

Պառավն գնաց տղեն տուն բերեց։ Թագավորի ախչիկ պառվուն դուս խանեց, դուռ փակեց պառվու վրեն, օր տուն չի գա։ Թագավորի ախչիկ հոլընգեց, տղեն ընկավ, առավ վարոցներ վրը տղին ընկավ, երկու խուրց վարոց վրը տղին կտրտեց, տղեն լեզվեն էցկեց։ Տարավ փայնի մեջ գնեց։ Էրկ օր փայնի մեջ մնաց։ Գնաց փայենեն խանեց, համամչուն կղանչեց, ըսաց.

— Էսա մարթ համամ տար։

Համամչին վերցուց էդ մարթուն համամ տարավ, լողկրցուց, տուն բերեց։

---

1 Հավանաբար ձիանոց, կավուշի՝ կանյուշնի (ձիանոց) (Ս. Կ.)։

Տղեն էլ ծուութուն չէներ։ Մե երկ օր, իրեք օր ընցավ մեջ, ախչիկ տղին խարցուց.

— Ի՞նչ գործ գելի քու ծեռնեն։

Տղեն ըսաց.— Ոընչպրութուն։

Թուխտմ գրեց, էդ աղի ծեռ տվեց, ըսաց.

— Կէրթաս իմ խոր պատ շարող ուսթի մոտ կբանիս։

Տղեն թուխթ տարավ թագավորի պատ շարող ուսթին տվեց։ Պատ շարող ուսթեն թուխթ կարդաց, ընթունեց։

Մինչև իրիկուն բանավ, իրիկուն տուն էկավ։ Ամիսմ էդ ուսթի մոտ բանավ։

Էդ թագավորի քաղքի եբևելի բաղրգան ապրանք բռնեց, Շամ, Հալար կերթեր։ Տեսավ օր էդ տղեն ուսթի հ՞առեճ շատ ժիր կբաներ, ըսաց.

— Իմ խետ չի գա՞ս Շամ, Հալար էրթանք։

Ըսաց.— Իրիկուն էրթամ թագավորի ախչկնից խարցում։

Իրիկուն տուն էկավ, թագավորի ախչկան ըսաց։— Էս քաղքի ճոչ թուշար Շամ, Հալաբ կէրթա, ընծի կըսեր՝ «Չի գա՞ս ինձ խետ էրթանք», ես էրթա՞մ, թե՞ չէրթամ։

Ըսաց.— Կտանի՛, գնա՛։

Տղեն սարախտան թուշրի մոտ գնաց, ըսաց.— Կիգամ։

Թուշարն ըսաց.— Ուրիշներուն կիտամ ամիս էրկու օսկի, քըզի կիտամ էրկու օսկի ու կես։

Խոսք տվեց թուշրին, թուշար ապրանք կապեց։

Տուն էկավ ախչկնից խարցուց.— Ես իմա՞լ էրթամ, իմա՞լ գամ։

Ախչիկն ըսաց.— Ինչ օր քըղնե կխարցուն, ըսա՝ «Աղեկ ա, խորոտ ա»։

Ախչիկ բան մի խարշլխ տվեց էտոր։ Գնաց թուշրի մոտ. բարձան ձիանք ու գացին։

Մե քանի օր ճամբախ գացին, էն մի ավուր ճամբախ ախպրի ճուր չկեր, խոր էր, խորուց պտի մարթ մտեր, ճուր խաներ։

Թուշար կղանչեց մշկրներուն մեկ, ըսաց.— Խոր մտե՛ք, ճուր խանեք։

Տղեն ըսաց.— Ես կմտիմ։

Թագավորի փեսեն մտուցին խոր, ճուր խանեց։ Էդ խորու մեջ դուռմ բացվավ, դռնեն մարթմ ծեռ թալեց, էտոր բռնեց, ըսաց.

— Արի՛, թագավոր կկղանչա։

Թագավորի փեսեն գնաց ներս։ Տեսավ օր մարթմ քուռսու

վրեն նստուկ, տաշտրմ ճուր հ'առեճ դնուկ ա, գորտնուկ մը տաշ-տի մեջն։ Քուռսու վրեն նստող Քաջանց թագավոր խարցուց.

— Ե՞ս եմ խորոտ, թե՞ չէ էս գորտ։

Տղեն ըսաց.— Գեռնուլ սևեն, գյուզել օլուր դունյա դա (Սրտի սիրած գեղեցիկ կրլլա աշխարհի մեջ)։

Էդ խոսք ըսելուց, գորտնուկի լիրաս (ձև) փոխվավ, էղավ մե խորոտ ախչիկմ։

Քաջանց թագավոր, թագավորի փեսին բերեց էրկու հատ նուռ տվեց։

Էկավ խորու մոտը, ծեն տվեց, շրիդ իջուցին, էտոր խանեցին։ Էդ օր խորուց էլավ, տեսավ օր ուրիշ բազրգանմ էկավ, ուրին ծանոթ մարթմ խետն էր։ Էդ էրկու խատ նուռն օր Քաջանց թագավոր տվեր էր, կղանչեց ուր ծանոթ մարթուն, նոներ էդ մարթուն տվեց, ըսաց.

— Կտանիս մեր տուն, թագավորի ախչկան կիտաս։

Ելան, հ'ընդան ճամբախ դեմի Շամ, Հալաբ գացին։ Գացին խասան Հալաբ, զուրանց ապրանք խրիտ էնեցին (ծախեցին), կիրակի օրը էդ թուշար ուզեց ճամբախ էլնել։

Էդ տղեն ըսաց.— Կիրակի օր ճամբախ էլնել աղեկ չէ։

Կիրակի օրը բազրգան չելավ քաղքից։ Էրկուշաբթի բարցան ուրանց ձիանք, ճամփա էկան։ Էկան մե ձորմ։ Էդ ձոր շատ վախ կար, էդ տղեն ուզեց ետ մնալ։

Թուշար ըսաց.— Ետ մի մնա ըստեխ, ըստեխ վախ կա։

Տղեն անկաշ չէնեց թուշրին, ետ ընկավ։ Տեսավ օր սարի մեջ ծեն կեր։ Տղեն առավ էդ ծեն, գնաց, տեսավ օր եռսուն գող էդտեխ ապրանք ա բերած ապրնքի վրեն կկռվին։

Տղեն բոռալեն դեմի գողեր վազավ։ Գողեր թորկին ապրանք, փախան։ Տղեն առավ էդ ապրանք, էկավ։ Էկավ խասավ բազրգնին, բազրգան խարցուց.

— Ա՛յ մարթ, էդ ապրանք հ'ո՞ւստեն բերիր։

Ըսաց.— Գողերուց խլեցի։

Խրտ բազրգնին էկան, էկան խասան ուրանց քաղաք։ Ուր բերած ապրանք բազրգընի դուռ թափեց, ուր տուն գնաց։

Թագավորի ախչիկն օր տեսավ, շատ ուրախցավ։ Նստան։ Բազրգան բաշին բերեց համլչիք, ինչ օր էդոր ապրանք, օր սարեն բերեր էր, դնեց համլչոց չալակ, էդոր տուն ճամփեց։

Թագավորի ախչիկն օր տեսավ ապրանք, խարցուց.— Էս ի՞նչ ապրանք ա։

Տղեն ըսաց.— Ես գողերուց խլեցի, բաղրգնին տվի, բաղրգան մըզի ճամփեց։— Տղեն ըսաց.— Թագավորի ախչիկ, էրկու խատ նուռ ի ճամփե, էկե՞ խասե քըզի։

— Հա՛,— ըսաց,— էկե, խասե, էտոնք անգին քար են։

Թագավորն օր հ՝իմցավ էդ բաներ, պատրաստուն տեսավ, ախչիկն ու փեսեն տուն տարավ։ Շատ ուրախցավ վրեներ։

Ախչիկն խոր ըսաց.— Ինչպե՞ս է, կհավնի՞ս ծուռ տղին։

Թագավոր ըսաց.— Ախչիկս, էն օր կսիր թե՝ եթե լավ ախչկա ծեռ ընգի կխելացանա, ես չէր ավատի, լավ մարթ ա էղե։

Պատրաստուն տեսան հարսնիքի։ Յոթ օր, յոթ գիշեր դհոլ զարկին, հարսնիք էրին, պսակեցին։ Ուրանք խասան ուրանց մուրազին, մենք լէ՝ մեր մուրազին։